

ՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԵԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

Պրոֆ. Երնստ Մէյմանի «Դասախօսութիւններ փորձ-
նական մանկավարժութեան մասին»

II

Մանուկի մաւմնական եւ հոգեկան զարգացումը ընդա-
նուր գծերով.

Ամեն մի դաստիարակութիւն մի կողմից բնական
զարգացման պահպանութիւնն է, միւս կողմից այդ զար-
գացումը որոշ դաստիարակչական նպատակներին ուղղելը:
Հետաքրքիր է նախ որոշել մանուկի զարգացումը ըստ ին-
քեան, թէ ինչ աստիճաններ է ունենում և ինչպէս է լի-
նում ամեն մի աստիճանում՝ այդ զարգացումը:

Այս տեսակէտից մանուկի կեանքը բաժանւում է հե-
տեւալ շրջաններին՝ 1) իսկական մանկական հասակ, այ-
սինքն ծննդից մինչև սեռական հասունութիւնը (մօտա-
ւորապէս մինչև 14 տարեկանը, հարաւային երկրների հա-
մար մինչև 13-ը, 2) պատանեկան հասակ՝ 14-ից մօտաւո-
րապէս մինչև 18-ը. (աղջկերանց համար 16 տ.), 3) երի-
տասարդական հասակ, որը զարգացման վերջին աստի-
ճանն է:

Մանուկի զարգացումը միայն իւր հասակին համա-
պատասխան որակի գործեր կատարելու և այդ գործերը
քանակով մեծացնելու մէջ չէ, նրա օրգանիզմը նոյնը չէ,
ինչ որ հասակաւոր մարդունը, միայն փոքր գիրքով. եր-
կուսի օրգանիզմների մէջ թէ բնախօսական և թէ ֆիզիո-
լոգիական տարբերութիւն կայ: Հէնց մանուկի կմախքի
մէջ տեսնում ենք հասակաւորի կմախքից տիպիկ տարբե-
րութիւններ. շատ մասեր մանուկի մէջ դեռ կրճուկային
են, որոնք յետոյ փոխւում են ոսկրի. հէնց այդ պատ-
ճառով մանուկի կմախքը աւելի ճկուն է և այնքան էլ
կոտորուելու վտանգին ենթակայ չէ: Գլխի և միւս անդամ-

ների յարաբերութիւնը նոյնպէս տարբեր է. գանգի և դէմքի յարաբերութիւնը շատ աւելի մեծ է, քան հասակաւորինը: Մինչդեռ նորածնի համար այդ յարաբերութիւնը 18:1 է, հինգ տարեկանի համար՝ 15:1, տասերեք տարեկանի համար՝ 13:1, իսկ հասակաւորինը $2\frac{1}{2}$:1: Այսպիսով մանուկի, մանաւանդ մէկից մինչև ութ տարեկան հասակը, գանգի մէջ ուղեղի համար շատ տեղ կայ, որը պէտք է լեցուի և հետևաբար ուղեղի աճումը այդ ժամանակամիջոցում շատ ուժեղ է լինելու» (Բաուր): Յայտնի է, որ գանգի ոսկորները սկզբում միացած են թաղանթներով, որոնց տեղը յետոյ կազմում են գանգի ոսկրէ կարերը. եթէ այս ոսկրացումը անընական է կատարում, ուղեղի աճումը դանդաղ է առաջ գնում, իսկ որա հետևանքը լինում է մտաւոր յետամնացութիւնը: Հասակի աճումն էլ հաւասարաչափ չի լինում, այլ որոշ շրջաններում տարբերում է. մանուկի զարկերակը աւելի արագ է խփում, քան հասակաւորինը. 6—7 տարեկաններինը մի րոպէում խփում է 128—72, 10—11 տարեկանինը՝ 108—56, 13—14 տարեկանինը՝ 114—66, հասակաւորինը 90—60: Թոքերի պարունակութիւնը աւելի փոքր է քան հասակաւորինը. ըստ Բաուրի 7 տարեկանինը, որի հասակը հաւասար է 110, 5 սանտիմի, այդ պարունակութիւնը 862 խոր. սանտ. է. 11 տարեկանինը՝ 133, 4 սանտ. իսկ ճաշակելիքը և հոտոտելիքը ըստ երևոյթին թոյլ են, համեմատած հասակաւորինի հետ: Մանուկի շարժումները աւելի արագ են և անկանոն. Ֆիրօրտը հետազօտել է և գտել, որ հասակաւորը ծանր, բայց կանոնաւոր է քայլում, իսկ մանուկը արագ և անկանոն. Հետազօտում են նախ առանձին դործիքներով մանուկի մարմինը. օրինակ երկու կողմը ձգած ձեռքերի երկարութիւնը, կրծքի ծաւալը, լայնութիւնը, իրանի երկարութիւնը, ուսերի բարձրութիւնը, գլխի երկարութիւնը, դէմքի երկարութիւնը և այլն և այլն. այս դէպքում հարկաւոր է ինկատի ունենալ մանուկի աղդութիւնը, այլ և հասարակական դիրքը, ծնողների զբաղմունքը և բարեկեցութիւնը և թէ արդեօք

մանուկը ինչպիսի հոգածութեան է արժանանում: Մանուկի զարգացման վրայ ամենից մեծ չափով ազդում է ծնողների դրութիւնը, թէ ինչպիսի կարողութեան տէր են, հասարակութեան ինչ խաւի են պատկանում: Գէշ — էրնստի հետազօտութեամբ, որքան ծնողների հասարակական դրութիւնը լաւ է, այնքան մանուկի ֆիզիքական զարգացումը յաջող է, եթէ ի հարկէ ուրիշ գործօններ վատ ազդեցութիւն չեն ունենում: Այս պատճառով վատ սնուող մանուկը, ֆիզիքապէս ետ մնացածը, ընդհանրապէս հոգեպէս էլ թոյլ է լինում, մտաւորապէս էլ ետ մնացած: Աւելի կարեւոր է որոշել նաեւ այն, թէ դպրոցը այդ զարգացման վրայ ինչպիսի ազդեցութիւն է ունենում, արդեօք մնասում է թէ նպաստում: Մասնաւորապէս նկատենք, որ գիւղացի մանուկների կրճքի ծաւալը քաղաքի մանուկների կրճքի ծաւալից աւելի է, որ տղաները 11—12 տարեկան հասակում իրենց մարմնի մեծութեամբ ու կշռով նոյն հասակի աղջիկներից պակաս են, որ գլխի չրջապատը և գանգի ծաւալը համեմատած ամբողջ մարմնի հետ աղջիկներինը աւելի փոքր է քան տղաներինը (Գէշ — էրնստ):

Բազմաթիւ բժշկական ուսումնասիրութիւններից պարզւում է, որ ֆիզիքապէս թոյլ, ետ մնացած մանուկների վրայ վտանգաւոր ազդեցութիւն է թողնում ուսումնարանը. նոյն իսկ նրանց ամբողջ կեանքի ընթացքում զգացւում է վաղ դպրոց մտնելու մնասը, իսկ բնական աճումն ունեցող 6 տ. մանուկների համար դպրոց մտնելը ոչ միայն վտանգաւոր չէ, այլ աւելի նպաստում է նրանց արագ աճմանը. սրա պատճառը մասամբ մանուկի կեանքի կանոնաւորման մէջ է, որ նրանք սովորում են կարգ ու կանոնի, մաքրութեան և որ սկսում են իրենք իրենց վրայ ուշադրութիւն դարձնել: Ուսումնարան մտնելով մանուկների մէջ սկսում են երեւան գալ տիպիկ դպրոցական հիւանդութիւններ, ինչպէս՝ սակաւարիւնութիւնը, նեարդայնութիւնը, կարճատեւութիւնը, օղնաշարի ծռուելը և այլն, որոնք ի հարկ է անբարեյաջող պայմաններ են մանուկի զարգացման համար:

Զարգացման ընթացքի տատանումների վրայ աւելի մեծ ազդեցութիւն ունին սեռական հասունութիւնից առաջ եղող և սեռական հասունութեան ժամանակի շրջանները։ Աղջիկները աւելի շուտ են հասունանում, քան տղաները, աղջիկների համար միջին թուով այդ շրջանը 13—14 տ. հասակն է, իսկ տղաների համար 14—17 տ. հասակը։ Սեռական հասունութիւնից առաջ եղող շրջանում մանուկի զարգացումը արագ ու թափով է լինում. 11—12 տ. հասակում՝ աղջիկները աւելի են զարգանում, քան տղաները։ Յայտնի է, որ ֆիզիքական զարգացման զուգահեռաբար գնում է և հոգեկան զարգացումը. 9—14 տ. հասակում՝ յիշողութեան և մտաւորի զարգացումը ֆիզիքականին զուգընթաց է գնում. ուղեղի զարգացումը ընդհանրապէս մտաւորի զարգացմանը զուգընթաց է։

Զարգացման տատանումները ուսումնասիրելով երեւում է, որ այդ տատանումները մի տարուայ ընթացքում են տեղի ունենում թէ ֆիզիքական և թէ հոգեկան զարգացման մէջ։ Մանուկի ֆիզիքական զարգացումը աւելի ուժեղ է լինում աշնանը և ձմեռը. հոկտեմբերից յունուար մարմնական ոյժերը զարգանում են, մարտին և ապրիլին նկատուում է թուլացումն, որից յետոյ կրկին երևում է թափով գործունէութիւն մինչև յուլիս. ամառը մանուկների հասակը ամենից շատ է աճում։ Նրանի զարգացման համար ամենից անբարեյաջող ամիսները տղաների համար յունուարն ու մարտն են, աղջիկների համար՝ մարտը, ապրիլը։

Հոգեկան զարգացումն էլ ունի իւր տատանումները, որոնք մասամբ զուգընթաց են մարմնական տատանումներին, մասամբ բոլորովին հակառակ. ուշադրութեան կեդրոնացման և յիշողութեան զարգացման համար ամենից յաջող ժամանակը հոկտեմբերից յունուարն է, մանուկի հոգու կարողութիւնները ընդհանրապէս այդ ժամանակ աճում են, յունուարից—մարտ՝ թուլանում են. մինչդեռ ամառը ֆիզիքական զարգացումը եռանդով է առաջ գնում, մտաւորը ընդհակառակը թուլանում է, որովհետև մարդ

ամառը աւելի ջրերի աշխատանք է կատարում քան ուշ գեղի։

Հոգեկան զարգացման տեսակէտից 1) մանուկները մինչև 14 տ. հասակը չեն ունենում որոշ ընդունակութիւններ, որ յետոյ հասակաւորները ձեռք են բերում։ 2) Մի քանի ընդունակութիւններ, որոնք հասակաւորի հոգեկան կեանքում աչքի ընկնող դեր են խաղում, մանուկի համար աննշան դեր ունին և ընդհակառակը։ 3) Մի քանի տարրական ընդունակութիւններ մանուկի համար որակով տարբեր են և տիպիկ նշանակութիւն ունին, քան հասակաւորի համար։ 4) Ընդհանրապէս թէ հասակաւորի և թէ մանուկի համար հոգեկան ընդունակութիւնները որակով նոյնն են, տարբերում են միմիայն իրենց ուժեղութեամբ, մանկան ընդունակութիւնները թոյլ են, հասակաւորինը-ուժեղ։ 5) տարեկան հասակում մանուկը ունի այն բոլոր ընդունակութիւնները, ինչ որ յատուկ են հասակաւորին, միայն դեռ թոյլ են։ Մանուկը աւելի անձնական տպաւորութիւն է ստանում, քան հասակաւորը, իրերի մէջ նա մեծ չափով այն է տեսնում, ինչ որ իրեն արդէն առաջուց յայտնի էին, քննադատութիւնը դեռ շատ թոյլ է լինում։ Հասակաւորը մեծ մասամբ բառերով է մտածում, իսկ մանուկը շօշափելի պատկերներով, երեխան էլ կարող է մտածել բառերով, իսկ հասակաւորը՝ պատկերներով, սակայն այդ յարաբերութիւնը տարբեր է։ Մանուկը իւր զգայարանների միջոցով ստացած տպաւորութիւնների մէջ պակաս չափով է յատկութիւններ տարբերում, քան հասակաւորը, 6-7 տարեկան մանուկը քիչ գոյներ է տարբերում, պակաս չափով է նկատում պայծառութիւնը, Մանուկը դժուար է ըմբռնում նաև ժամանակի փոքր և բարդ միջոցները, մի որ և է բան որոշ ծրագրով, նպատակով գիտելն էլ հետզհետէ է զարգանում նրա մէջ։

Ամենից կարևոր տարբերութիւնն այն է, որ մանուկը դեռ իւր ստացած տպաւորութիւնները ի մի համախմբել, եզրակացութիւններ հանել չի կարողանում։ Նա միայն

մասնաւոր կողմերի վրայ է ուշադրութիւն դարձնում. օրինակ հեռաւորութիւնները չափել գծաւարանում է, երբ մի առարկայի ձև են ցոյց տալի, նկատում է միայն առանձին կէտերը: Մանուկի կամքն էլ դեռ հատուածական է. երեխան գործում է անկապ, իւր գործունէութիւնը չի ուղղում որոշ նպատակի. յիշողութեան մեքենայական կողմը մանուկի համար աւելի դեր է խաղում, քան հասակաւորի, որովհետև վերջինս ընդունակ է արդէն տրամաբանական շղթայով դէպքերը միմեանց հետ կապելու և իբր մի ամբողջութիւն գիտակցութեան մէջ ամփոփելու:

III.

Մանուկի առանձին հոգեկան ընդունակութիւնների զարգացումը.

Հոգեկան ընդունակութիւնները, առանձին, հոգուն յատուկ ոյժեր չեն, սրբա որոշ աշխատանքի համար կատարող հոգեկան գործողութիւններ են. հոգեկան ընդունակութիւնը որոշ աստիճանի ու չափի է լինում. այդպատճառով նա միաժամանակ դառնում է անհատական ընդունակութիւն: Ընդունակութիւնները լինում են ընդհանուր, որոնք ամեն տեսակ հոգեկան գործողութեան մէջ դեր են խաղում և յատուկ կամ որոշ որակի ընդունակութիւններ, որոնք երևան են գալիս այն ժամանակ, երբ գիտակցութիւնը որոշ տեսակի տարրեր ունի: Ընդհանուր յատկութիւններն են՝ ուշադրութիւնը, հոգեկան աշխատանքին յարմարուիլը, ոյժերի կեդրոնացումը աշխատանքի վրայ, հոգեկան գործողութիւնների փոխուիլը շնորհիւ վարժութեան կամ վերջինիս բացակայութեան. յատուկ ընդունակութիւններն են—խօսելունը, շարժողութեանը:

Ամենից տարրական ընդունակութիւնը երեխայի համար զգայարանքներով ստացած տպաւորութիւնն է, երևակայութիւնը, յիշողութիւնը և այլն: Յիշողութիւնը մա-

նուկի աշխատանքի համար վճռական նշանակութիւն ունի. Պետաւլոցցին այս նպատակի համար աշխատում էր մանուկներին միաժամակ մի քանի բանով զբաղեցնել, օրինակ՝ պէտք է հասարակ ձեռքի աշխատանք կատարէին և միաժամանակ մի բան սովորէին. Հերբարտը վերլուծեց ուշադրութիւնը առհասարակ և մշակեց կամաւոր ու ակամայ ուշադրութեան ուսումը. Յիշողութեան հոգեբանական վերլուծութիւնը ցոյց է տալիս, որ յիշողութիւնը բարդ երևոյթ է. Ընդհանուր առմամբ դա հոգեբանական-փիլիզիքական գործողութեան ամենաուժեղ դրութիւնն է. Որքան աւելի ուշադիր ենք, այնքան աւելի հոգեկան եռանդ ենք գործադրում՝ մեր մտաւոր գործունէութեան, երկակայութեան, մտքերի տպաւորութիւնների մէջ. Հոգեկան եռանդը ուժեղ կերպով կեդրոնացնելով որոշ ուղղութեամբ կատարուող գործողութեան վրայ, գիտակցութեան միւս տեսակի գործողութիւնները կանգ են առնում. Յիշողութիւնը ունի որոշ ուժեղութիւն, որոշ ծաւալ, որքան ուժեղ է գործում յիշողութիւնը, այնքան այդ յիշողութեան ծաւալի մէջ մտնող առարկաների թիւը փոքր է և ընդհակառակը, որքան շատ առարկաներ կան յիշողութեան ծաւալում, այնքան նա թոյլ է գործում. Կարելի է դիտել, որ այն մտապատկերները, որոնք մեր գիտակցութեան մէջ կան, բայց դրանց վրայ ուղղուած չէ ուշադրութիւնը, զուգորդութիւններ չեն կազմում կամ եթէ կազմում են թոյլ աստիճանի միայն և սրանք վերարտադրման համար կամ դեր չեն խաղում կամ քիչ նշանակութիւն ունենւ. Օրինակ՝ երբ մենք մեծ ուշադրութեամբ զբաղուած ենք մեր մտքերով, փողոցում եթէ մի ազմուկ էլ լինի, մենք այդ տպաւորութիւնը չենք ընդունում. ստացած տպաւորութիւնները կանգ են առնում, աննկատելի են մնում. Յիշողութեան կեդրոնացումը կամ գիտաւորեալ է տեղի ունենում կամ՝ առանց գիտաւորութեան. Պէտք է տարբերել զգացողական կամ արտաքինի վրայ ուղղուած յիշողութիւնը, մտաւոր կամ ներքինին ուղղած յիշողութիւնից. առաջին գէպքում յիշողութիւնը ուղղուած

է զգայարանքների միջոցով տպաւորուող առարկաների վրայ, երկրորդ գէպքում նա, տպաւորութիւնները դեկամարող կամք է:

Յիշողութեան յատկութիւնները և նշանները զանազան անհատների համար շատ տարբեր են. կան անհատներ, որոնք յիշողութեան ուժեղ կեդրոնացումն ունեն, բայց փոքր ծաւալով և ընդհակառակը. յիշողութիւնը կարող է շուտ շուտ փոխուել մի առարկայից միւսին կամ կարող է կայունութիւն և հաւասարաշափութիւն ունենեալ և այլն: Նորագոյն հոգեբանները հասկացան միայն, որքան կարեւոր են այն փիղիքական երևոյթները, որոնք ուղեկից են ուշադրութեանը. զգացողական ուշադրութեան գէպքում աչքն է ակիւսօդացիայի ենթարկւում և ականջը, աւելի ընդարձակ մտքով յարմարւում են նաև գլուխը, իրանը և ընդհանրապէս ամբողջ մարմինը: Կան մարդիկ, որոնք ճակատն են կնճռոտում. մտաւոր յոշողութեան գէպքում ուրիշները յօնքերը մօտեցնում են իրար կամ մատներն են շարժում. նոյն իսկ բռնեցքներն են սեղմում, շնչառութիւնը աւելի մակերևոյթային է դառնում. իսկ կարճատե կեդրոնացման գէպքում նոյն իսկ գադարում է: Այս գործողութիւնները նպաստաւոր ազդեցութիւն են ունենում ուշադրութեան վրայ, տպաւորութիւնները աւելի որոշ են դառնում, նրանց զարթեցնող ուղղութիւնը աւելի մեծանում է, նրանց յարուցած մտապատկերների միացումը աւելի բովանդակալի է դառնում:

Մանուկի յիշողութիւնը աւելի շատ առարկաների վրայ է դառնում, քան ուժեղ կերպով մէկի վրայ կեդրոնանում, մի հանգամանք, որ ոչ թէ հասակաւորի յիշողութեան յատկութեան նշան է, այլ յիշողութեան թուլութեան: Այն մանուկները, որոնք իրենց յիշողութիւնը կեդրոնացնել գիտեն, ընդունակութիւն ունեն, աւելի լաւ դատելու և յիշելու այն ամենը, ինչ որ նրանց զգայարանքներին ենթարկուող տպաւորութիւններին է վերաբերում: Մանուկը գծաւորութեամբ դիտաւորեալ կերպով իւր յիշողութիւնը մի բանի ուղղել կարող է, նրան գրա-

ում է զբաղմունքի կամ առարկայի որոշ գեղեցկութիւնը կամ հետաքրքիր լինելը. բայց մանուկներին պէտք է վարժեցնել հաւ, որ դիտաւորեալ կերպով կարողանան իրենց յիշողութիւնը կեդրոնացնել, եթէ նոյն իսկ առարկան անհետաքրքիր լինի. յետագայում կեանքում հարկաւոր է լինում դիտաւորեալ ուշադիր լինել և չի կարելի յուսալ, որ առարկան միշտ հետաքրքիր կլինի:

Նոր առարկային ուշադրութիւն դարձնելու յարմարութիւնը մանուկի համար աւելի դժուար է լինում, քան հասակաւորի. առհասարակ հոգեկան որևէ գործողութիւն մանուկի համար աւելի ժամանակ է պահանջում, քան հասակաւորի: Մանուկի յիշողութիւնը անհաստատ է. մինչդեռ հասակաւորը ինքն իրեն ստիպում է, որոշում է ուշադիր լինել մի բանի, մանուկին պէտք է միշտ կրկին ու կրկին դրաւել, որ ուշադրութիւնը կեդրոնացնէ: Մանուկները աւելի մեծ չափերով փիղիքական շարժումներ են անում յիշողութեան ժամանակ, մարմինները ծռում են, ճակատները կնճռոտում, շրթունքները շարժում, գլուխները շարժում. որքան վարժւում են յիշողութեան կեդրոնացմանը, այնքան այս շարժումները պակասում են. ջղերի ամեն տեսակ աւելորդ աշխատանք փնասակար է հոգեկան աշխատանքի արդիւնքի համար:

Յոգնածութիւնն էլ հոգեկան յատկութիւն է. որը տիպիկ տարբերութիւն ունի դանազան անհատների մէջ. կան մարդիկ, որոնք շուտով են յոգնում և այնպիսիները, որոնք քիչ թէ շատ երկար աշխատանքի դէպքում չեն յոգնում: Համաձայն կատարուած փորձերի մանուկը որքան հասակաւորից շուտ է յոգնում և այնքան աւելի շուտ, որքան փոքր է:

Ընդհանրապէս զգայարանները շրջանում մանուկի զգացողութիւնը և նրբութիւնը աւելի փոքր է քան հասակաւորինը, մանուկները չեն կարողանում գոյները տարբերել. 6—7 տարեկանները տարբերում են սպեկտրի չորս գլխաւոր գոյները՝ կարմիրը, դեղինը, կանաչը և կապոյտը, աւելի ուղիղ են տարբերում միայն սև ու սպիտակ գոյ-

ները, թէև այս գոյները իսկապէս որ և է գոյնի ազդեցութիւն չեն թողնում. գոյների ճանաչողութեան մէջ ազդիկները աւելի յաջող են քան տղաները, կան դէպքեր, երբ մանուկները ճանաչում են գոյները, բայց անունը տալ չեն կարողանում. նկատուում է նմանապէս որոշ գոյների առանձին սիրով վերաբերուելը, յետագայում այս հանգամանքը նրանց արած գեղարուեստական գնահատութեան համար վճռական դեր է խաղում: Մանկավարժական տեսակէտից կարևոր է, որոշ համակարգութեամբ գոյների տարբերման և դիտողութեան համար ձևական վարժութիւններ կատարել, թէև դպրոցներում այս բանի վրայ ցայսօր կարևոր ուշադրութիւն չեն դարձնում: Ձայները տարբերելը և եղանակը յիշելը և անհատական մեծ տարբերութիւն է ներկայացնում. երաժշտական ընդունակութիւն ունեցող մանուկները շուտ են սովորում երգել, քան խօսել, դպրոց մանող մանուկները, միջին թուով, պակաս ընդունակութիւն ունին տարբերելու ձայների բարձր ու ցածր լինելը և մտքում պահելու պարզ ձայների շարքերը: 6—19 տ. հասակում այս ուղղութեամբ կատարուող աշխատանքում մեծ յառաջագիմութիւն են անում:

Առարկաների մէջ եղած տարածութեան մտապատկերը մանուկը զարգացնում է շնորհիւ իւր բռնող շարժումների, աւելի ևս զարգանում է այդ բանը, երբ մանուկը սկսում է ման գալ և վազել: Ձեերի ու ֆիգուրաների իսկական ըմբռնումը զարգանում է երկրաչափական հիմնական ձևերի հետ ծանօթանալուց յետոյ, մանուկին աւելի ծանօթ են ոչ թէ եռանկիւնին, այլ շրջանը և գունդը, յետոյ քառակուսին, ապա միայն եռանկիւնին: Պարզ է ուրեմն, այն՝ ինչ որ երկրաչափութեան մէջ պարզ ձև է, հոգեբանական տեսակէտից պարզ չէ: Մանուկի աչքաչափը շուտ է զարգանում, պերսպեկտիւ նկարների ըմբռնումը նրա մէջ թոյլ է, եթէ մանուկին հարցնես նկարի վրայ եղած տարածութիւնների և նրանց համապատասխանող տարածութիւնների յարաբերութեան

մասին, նա յաճախ տարօրինակ և թիւր ըմբռնումներ ցոյց կտայ:

Աւելի առաջ դարգանում է ժամանակի ըմբռնումը, երկար ժամանակի մասին հասկացողութիւնը յաճախ մնում է առանց կատարելագործման. 5-7 տ. մանուկները սովորաբար այնպիսի ժամանակների հասկացողութիւն ունեն, որոնց հետ առօրեայ կեանքում ստիպուած են ծանօթանալ. 5-6 տ. մանուկների համար միևնոյն է ասել, թէ այս ինչ դէպքը երեկ կատարուեց, թէ մի շաբաթ առաջ կամ մի ամիս, մի քանի տարի առաջ. եղանակների մասին էլ գաղափար չունի. ամենալաւ դէպքում գիտէ, որ ձմեռը ցուրտ է և ձիւն է գալի, ամառը դաշտերը կանաչ են և անասունները գնում են արածելու: Անհրաժեշտ է այս հանգամանքի վրայ լուրջ ուշադրութիւն դարձնել, որովհետև յաճախ ստորին բաժանմունքում սկսում են սրբազան պատմութիւնից և պատմութիւնից դասեր տալ, երբ ժամանակի բարդ գաղափարներ են հանդէս գալի և մանուկների համար անհասկանալի են մնում:

Մանուկի յիշողութիւնն էլ դարգանում է հետզհետէ, բայց ոչ որոշ աստիճանաւորութեամբ, այլ թռիչքներով, այսինքն որոշ հասակում նա սկսում է այնպէս յիշել, ինչպէս առաջ չէր կարողանում: Դիտողութեան կողմից տղաները աւելի ճիշտ ու դրական դիտողութիւններ են անում, քան աղջիկները. ընդհանրապէս երկու սեռի մանուկներն էլ աւելի դիտում են այն, ինչ որ մարդկանց է զերարեւում, քան այն, ինչ որ առարկաներին: Ամեն դէպքում էլ մանուկը աւելի շուտ դիտում ու պատկերացնում է առարկան, քան տեսական դատողութեամբ զբաղւում. այս բանը նկատելի է նրա խաղի ժամանակ. նա իւր անձնական յատկութիւնները վերագրում է իւր խաղալիք առարկաներին ու խրճիկներին. նկարներում դործագրում է իւր երեւակայութիւնը, իւր առաջուայ փորձը և իւր զգացածները: Սակայն մանուկին այս դրութեան մէջ չպէտք է թողնել, այլ պէտք է աշխատել, որ նա սկսէ վերլուծել տեսականօրէն ու ծանօթանայ կեանքի

խնդիրների հետ: Հարկաւոր է մանուկին դժադրութեան, նկարչութեան ու ձևեր ծեփելու արուեստի միջոցով ծանօթացնել իսկական ձևերի հետ, չնայել դրանց վրայ զուտ տեխնիքական կողմից, այլ ընդհանուր զարգացողական նշանակութեան, որ նրանք ունեն զգայարաններով ստացած մտապատկերների զարգացման համար: Յրէրէլի սկզբունքը, թէ այն, ինչ որ մանուկը տեսնում է թող ձեռքերով էլ կատարէ, պէտք է գործադրուի ոչ միայն մանկական պարտէզում այլ և դպրոցում: Շնորհիւ դժադրութեան մանուկի աչքը սկսում է ճշգրիտ, հետևողական ձևով տարբերել ձևերը, դոյները այլ և մանուկը սովորում է եղածը վերստուգել, ճշտել:

(շարունակելի)

Pessimist

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ ՅԻԼԼԵՐԻ ԶԵԻԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ.

Մի քանի խօսք.

Մեր մանկավարժական գրականութեան մէջ մինչև այժմ տիրող են եղել Գերմանիայում ծնած և զօրեղացած Հերբարտ-Յիլլէրեան դպրոցի մտքերը: Մեր մանկավարժները համարեա առանց բացառութեան քարոզել և քարոզում են, որ մանկավարժական խնդիրների լաւագոյն և ճշտագոյն ըմբռնումը Հերբարտի և Յիլլէրի կողմից է եղել և որ մեր դպրոցները պէտք է բարեփոխուին այդ մանկավարժների ոգով: Ընդունելով հանգերձ, որ Հերբարտը, աւելի փոքր չափերով Յիլլէրը մանկավարժական խնդիրների լուսաբանման և խորացման համար ընդհանրապէս աշխատել են, հէնց սկզբից չէինք ցանկանալ թադցնել մեր խոր համոզումը, որ այդ անձնաւորութիւնների ազդեցութիւնը չըպէտք է անմիջական դոյն ունենայ ներկայի համար, այլ աւելի պատմական: Նրանք պէտք է դառնան պատմական անձնաւորութիւններ այնպէս, ինչպէս Ռուսօն, Լոկը, Կոմենիուսը և ուրիշները: Նրանց մտքերի կորիզը, կամ աւելի ճիշտ այդ կորիզի որոշ մա-